Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Իրականացնող՝
Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Գործընկեր՝
Եվրոպական լրագրության կենտրոն

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

26 սեպտեմբեր, 2018թ.
ք.Երևան

«*Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար*» *ծրագրի բացման և գլխավոր վերապատրաստման դասընթացի մեկնարկ*

2018 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին Անի Պլազա հյուրանոցի «Անի» սրահում (հասցե՝ Երևան, Սայաթ Նովա 19) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կազմակերպում է Եվրոպական միության կողմից համաֆինանսավորվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրի բացման արարողությունը, ինչպես նաև մեկնարկում է ծրագրով նախատեսված գլխավոր վերապատրաստման դասընթացը: Ծրագիրն իրականացվում է Մաաստրիխտում գործող Եվրոպական լրագրության կենտրոնի հետ համագործակցությամբ:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես են գալու Հայաստանում Եվրոպական միության դեսպան Պյոտր Սվիտալսկին, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանը: Արարողությանը մասնակցելու են Եվրոպական լրագրության կենտրոնի միջազգային փորձագետներ, ինչպես նաև ներկայացուցիչներ ԵՄ-ից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և լրատվամիջոցներից:

Գլխավոր վերապատրաստման դասընթացի մեկնարկին ելույթներով հանդես են գալու ծրագրում ներգրավված փորձագետները՝ ներկայացնելով ծրագրի ընթացքում իրենց կողմից իրականացվող մարզային դասընթացների բովանդակությունը:

Միջոցառման ավարտին ՔՀԿ և լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն կունենան ծրագրին առնչվող իրենց հետաքրքրող հարցերը քննարկել բանախոսների հետ:

Պետական բյուջեն կառավարական ամենակարևոր գործիքներից է, որի միջոցով իրականացվում է կառավարության քաղաքականությունը: Այնինչ, Հայաստանի շատ քաղաքացիներ, հատկապես երիտասարդները, տեղյակ չեն, թե ինչպես է պետական բյուջեն ծախսվում: «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը նպատակ ունի ապահովել, որպեսզի լրագրողները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստեղծեն և տարածեն մատչելի տեղեկություններ և հոդվածներ, ինչպես նաև նպաստեն Հայաստանում բյուջետային միջոցների բաշխման և ծախսման վերաբերյալ իրական հանրային քննարկմանը:

Ծրագրի նպատակն է ամրապնդել քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը, մասնավորապես ԵՄ-Հայաստան հարաբերություններին շրջանակին առնչվող ոլորտներում պետական բյուջեի վերահսկողությունը, ինչպես նաև՝ երիտասարդների շրջանում հետաքննական լրագրության խթանումը:

Կոնտակտային անձ

Աստղիկ Վարդանյան
Ծրագրի հանրային կապերի պատասխանատու
Հեռ.՝ +374 (93) 64 07 57
Կայքէջ՝ www.foi.am
ՖԲ՝ @FOICenterArmenia